# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏ

## ՈՐՈՇՈՒՄ

N ՍՊ/29-2020

„24„ 02 2020թ.

*ք.Արտաշատ*

ՆԱԻՐԱ ԱԼԲԵՐՏԻ ՄԽԻԹԱՐՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՏՈՒՅԺԻ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 220-րդ հոդվածով և 223-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, <<Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ մասի բ) կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 07.10.2019թ. N 25-Ա և 31.10.2019թ. N 27-Ա հանձնարարագրերի համաձայն ֆինանսների նախարարության ֆինանսաբյուջետային վերահսկողության վարչության կողմից Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետարանում իրականացրած ստուգումների արդյունքում կազմված N 25-Ա ակտը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

<<Հանրակրթության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 16-րդ մասի պահանջը ոչ պատշաճ կատարելու՝ դպրոցի կանոնադրության 48-րդ կետի 18-րդ ենթակետի, <<Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները խախտելու համար <<Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արարատ քաղաքի Պարույր Սևակի անվան N2 հիմնական դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Նաիրա Ալբերտի Մխիթարյանին հայտարարել նկատողություն:

Recoverable Signature

X

ԳԱՐԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏ՝ Signed by: SARGSYAN GARIK 2811870695 Գ. ՍԱՐԳՍՅԱՆ